## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ի ՏԱՐԵԴԱՐՁԻ ՕԾՄԱՆ Վ. Կ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

*Ելք իմ են ելք կենաց. և պատրաստին կամք ... ի Տեառնէ Առակ. Ը. 35.*

Վեհափառ Տէր,

Բազում են այսօր շարժառիթք բերկրալատար հրճուանաց և մխիթարութեց սրտից իւրաքանչիւրոց միաբանութեանս՝ 'ի Տարեդարձի Ս. Օծման Վեհափառութեան Ձերոյ 'ի Կաթուղիկոսութիւն և յԱռաքելական յաջորդութիւն սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց,

Յիրաւի մի և եթ երևի պատեհ 'ի սերկեանս աչաց մարմնոյ՝ ցնծութիւն և մխիթարութիւն. բայց Վեհափառ Տէր՝ խնդրեմ ներել ինձ ամենախոնարհ ծառայիդ՝ բազումս ցուցանել և հրատարակել՝ որոց աչք են 'ի գլուխս և կշիռ արժանաւոր խորհրդածութեանց 'ի միտս,

Բանզի զի՞նչ ընծայէ զօգուտ սոսկ անուն և տօնախմբութիւն Տարեդարձի՝ և զի՞նչ արդիւնք ծնանին անտի, արդի՛ւնք ասեմ՝ որ եթէ ո՛չ զօգուտ հնարէ Ազգի և գործէ, որով և զպեղանիս դժնդակ և անըմբեր վիրացն մատակարարէ Հայրենեաց մերոց թշուառ և տառապեալ, ապա միայն զուարթութիւն ինչ վաղանցիկ և ապարդիւն կարէ ազդել, և զայն ամենայն յոյժ յոյժ սակաւաթիւ արանց՝ համեմատութեամբ բազմութեան Հայազնէից, ո՛չ, եթէ այսպիսի՛ ինչ է... աղէ՝ 'ի բաց 'ի մէնջ լիցի, ապա թէ ո՛չ արժան է մեզ 'ի յանձինս 'ի սիրտս և 'ի հոգիս զգալ զուրախութիւն մեծ և զմխիթարութիւն,

Արդ 'ի տօնել մեր այսօր զայն զայս զՏարեդարձ Ս. Օծման Ձերոյին Վեհափառութեան, տեսանեմք աչօք մտաց զամ մի ողջոյն մնաւանդ և զառաջինն իշխանութեան Ձերոյ բարձու՝ հոլովեալ 'ի չու անդարձ, այլ կարկառեալ մեզ համայն Հայկազանց և պատրաստեալ զելս կենաց.... զոր թողում նմին իմա՛ տարւոյն ասել՝ որպէս ասէ, "Ելք իմ են ելք կենաց, և պատրաստին կամք... 'ի Տեառնէ",

Այժմ պարզապէս զլուր աշխարհին իմաստասիրեալ և իմացեալ միայն զկեանս զթշուառ ասեմ և զերջանիկ, և որպէս երկոցունցն այնոցիկ 'ի վայելս փոփոխակի են ենթակայ իւրաքանչիւր մարդիկ և գերդաստանք... Նոյնպէս և ամենայն ազգք՝ սերունդք մարդկութե, զորոց կենաց ընթերցեալ յիւրաքանչիւրոցն 'ի պատմութեանց գիտեմք զազգի ազգի զանցանս և զպատահմունս՝ յայլ և այլ ժամանակս և 'ի դարս, և տարեալ ցարդ բազմապիսի բերմանց դժբաղդութեան և բարեբաղդութեան, որպէս և ցուարտ աշխարհի զզանազան դիպացն ապառնեաց և զպատահմանց ըստ ժամանակս, է մեզ գուշակել զկեանս ազգութեանց նոցին, յորոց՝ 'ի մասնաւորի ասեմ Ազգ մեր Հայկազուն ճաշակեալ է և փայելեալ փոփո-

խակի զերկուսին և զնեանս՝ զթշուառն և զերջանիկ. մանաւանդ զթշուառն՝ զոր, ցարդ քամէ իբրև զբաժակ լի դառնութեամբ, թէպէտ ոչ ըստ առաջնոյ դարուց ինչ դառն յոյժ և վշտալի, բայց և այնպէս՝ ըստ դարուս իննևտասներորդի՝ կարի ողբալի և միանգամայն պարսաւելի. այո՛, ողբալի է և պարսաւելի, ըստ որում բազում ուրեք է մեզ գիտել զթշուառ դրութիւն և զտառապեալ վիճակ Հայրենեաց մերոց և հայրենակցաց. է մեզ գիտել գոգցես յամենայն ուրեք զբարոյական և զմտաւորական տկարութիւնս և զազգի ազգի կարօտութիւնս հայրենակցաց մերոց՝ տառապեալ Հայաստան որդւոց. և մեզ գիտել միանգամայն զայն ամենայն մոլութիւնս և զբասրելի զարդիւնս տգիտութեան՝ թագաւորեալ ՚ի վերայ հէգ և չքաւոր աւետարանի սիրեալ զճանապարհ Հայկազանց՝ խմորելոցն ախտիւք սադուկեցւոց և փարիսեցւոց... որպիսեօքն աւա՜ղ, ո՜հ... եղև հիմն ՚ի վեր տապալումն դժբաղդ Հայրենեաց մերոց. զորոց զԽորենեանն և զԽորենեան առեալ ՚ի բերան զողբս՝ արժան է մեզ ցօղել առաւել զարտասուս հոգեբուղխս յոլովս, և զգալ ՚ի սիրտ՝ կսկիծ իմն հայրենասէր՝ եթէ են ՚ի մեզ ոգի և զգացմունք սիրոյ Հայրենեաց և Հայութեան.

Աստի հարկ էր և պատշաճ, զի ջանք և եռանդք ազգասիրաց վերածէին զվիճակ ազգային կենաց Հայոց յերկրորդն՝ իմա՛ յերջանիկն կեանս, և որպէս ՚ի կատարումն այսոցիկ փափագմանց և խանդից՝ պիտոյ էին բարեկարգութիւնք և պէս պէս օրինադրութիւնք, ևս վասն ազգային դաստիարակութեան և լուսաւորութեան՝ Ուսումնարանք և Վարժարանք, զորս ընդհանրապէս Ս. Էջ. Կաթ. գլուխ Ազգիս և Ս. Եկեղեցւոյս տնօրինել կարէր՝ և յարմար էր յոյժ. ուստի և համայն Ազգի մայր և էր իրաւունք և պարտաւորութիւն ընտրել զայնպիսի ոք արժանաւոր՝ և կարգել ՚ի վերայ իւր գլուխ, որ իւրով հանճարեղութեամբ՝ հեռատեսութեամբ՝ քաղաքագիտութեամբ մանաւանդ և գործունէութեամբ ձեռնհաս լիցի պսակել զիղձս և զտենչանս համայն Ազգի. վասնորոյ յատկապէս յայսմ նուագի միակամ և միաձայն հաւանութեամբ ընդհանուր լրութեան Ազգիս՝ ըստ վերնախնամն Տեսչութեան տնօրինելոյ՝ ընտրեցին զՎեհափառութիւն Ձեր.

Ընտրեցին այո՛ զՎեհափառութիւն Ձեր և յանձնեցին Ձերում սրբազնագոյն տէրութեան՝ վեհափառ, զիղձս իւրեանց և զանձուկս հաւատիւ, և յուսով մեծաւ ակնունէին և հնան օր աւուր տեսանել՝ ո՛չ որպէս զՄովսէսին միայն զձիրս, ո՛չ որպէս զՍողոմոնին միայն զձիրս, ո՛չ որպէս զիմն Հայկայ դիւցազնին միայն զձիրս, ո՛չ որպէս զիմ սէր Արամայն միայն զձիրս, ո՛չ որպէս զԶօրաբաբելին միայն զձիրս, ո՛չ որպէս զարժանայիշատակ Վաղարշակայն միայն զձիրս, ո՛չ որպէս զԽոսրովայն՝ զԹադդէոս՝ զԲար-

գովելիմաստին՝ զպանծալի Գրիգորիսին զՍահակայն՝ զՄեսրովբեանցն՝ զԵղիշէանցն՝ զՂ. և Խորենացն և զԴ. արդա-նանցն միայն զԻրս, այլ զամենեցուն համանգամայն. զինչ արդեօք, զխաւ-րակէս՝ զԴ. դարուն բարեկարգութիւն՝ զաւանդապահութիւն՝ զՍ. Եկեղեցեաց ըղ-պայծառութիւնս և զխաղաղութիւնս զծաղկումն դաստիարակութեան և լու-սաւորութեան ՚ի ձեռն վարժարանաց և ուսումնարանաց և այլոց միջոցաց կր-թարանաց, միով բանիւ ասել, բոլոր ամե-նայնի զյառաջադիմութեան Ազգիս և Ս. Եկեղեցւոյս զուգեցոյցս ՚ի բարոյա-կան՝ ՚ի մտաւորական՝ ՚ի տնտեսական և ՚ի գործնական ձիրս բարեյաջողիթս.

Արդ ասածս որ է ուստի բաղեղդայ և բաղմաքանակ Ազգայնոյս Հա-մայնից. իսկ ամենայն ՚ի սրտի ՚ի մեծ ջան և ՚ի ձիգ՝ գործ է Զերդ Ս. Եհափառու-թեան, Հայրդ Հասարակաց. ուրեմն ՚ի միջոցի սորա մեզ չունելոյ՝ զինչ ՚ի դէպ է մեզ տեսանել, աւարտելնու-թիւն եթէ արդարալի արդիւնաւորու-թիւն, ո՛վ տեսութեանս, ահա ասա ողի բանիւս, ասա հանդէպ են մեծամեծ հայ-րենատէր անձունք երկոցունց կողմանց, մին ցանկալ խանդակաթ տեսանել զե-ռանդս իւր և զխոհմանս, և միւսն ջանալ ՚ի սիրտ վառեալ և բորբոքեալ ՚ի սէր Հայութեան՝ ցուցանել պանծալիօք ըղ-գործս իւր. գործք՝ որ ոչ ամենայն արժանի են խանդք և ջանք. գործք՝ որ ոչ ամե-նեցուն կարողութեանց են հնար. գործք՝ որ միանգամայն զսիրտ և զմիտս առն ար-կանեն ՚ի ցնծ. որոց կարեն մնալ հանդի-սանալ այսօր Ս. Հայրն և սիրելի եղբարք Ս. ուխտիս՝ իբրև ականատեսք ականջա-լուր մանաւանդ և վկայելոց.

Բանալի զնի Ս. Օծման Զերոյ բաց ՚ի բարեկարգութեանց ինչ աղօթաւո-րեանց և բարեացակամ՝ ազատակից գոր-ծակցութեանց՝ յետ ոչ բազում ա-ւուրց նոր ուղևորութեան, կրկին յանձն առեալ տաժանելի իմն զՃանապարհոր-դութիւն ոչ կարճուղի, եկիք մեծա-փափագանօք և անձկութեամբ՝ յայց և ՚ի տես հանգամանաց... և ողջախաւ Թեանց սիրելի Հօտին Զերոյ և հայկազեան ժո-ղովրդեան. շրջեցայք յուղիղ և ՚ի դիւ-րագոյն ճանապարհէն որ առ Ս. Պ. բուրգ և հանդիպեալ հոյակապ քաղաքաց և գիւղօրէից ամենայն անձին ականատես ե-ղէք վիճակաց նոցին և ոչ խնայեցիք առ-նուլ զպատուէրս Զեր և զջանս օգտա-կարս ՚ի գործ դնել, յորս ոչ գոյր Ազ-գային դպրոց և ոչ մի, աշխատեցայք և յաջողեցայք հաստատել զժողովուրդն և յորդորել հիմնել կամ բանալ (՚ի յոր-մէ ուրուք՝ բնակարանս) դպրոցս յաղագս երկսեռ մանկտեաց Ազգիս, և ոչ միայն այսքան, այլ մանաւանդ և ՚ի միշտ յար-դիւնաւորն յառաջադիմութիւն և յան-խափան արդարաբերութիւն նոցին և այ-լոց դասուց կամ նորոգ կառուցանելոց ցորդ յոյժ և այլ տեղիս և ՚ի կողմանս, հոգէք և հաստատէք միջոցս կարևորս և հիմնաւորս, յանձնէք զսոյնոսիկ ՚ի տես-

շնորհութիւն և 'ի հաղորդակցութիւն սորայ աղքատաւորաց և անձնաւորաց.

Յորս տիրէր երկպառակութիւն՝ անհաշտելի խիստ ատելութիւն և աղքատաճառ թշնամութիւն և գրգռութիւն 'ի ժողովրդեան, հաղթում հաւր սիրեցեք ջանալ և խաղաղասիրել ջնջել և բառնալ զայնսպիսի սերմանս բանսարկութեան, և պարզել 'ի միջի Հայկազն ժողովրդեան զերաշխին նախկական խիստ պաշտելի պարտաւորութեան խիստ խաղաղ սիրութեան եղբայրսիրութեան և ազգասիրութեան . . . հաշտութեան քաղցրաբան բարոյութեամբ և խրատու վարդապետութեան ճշմարտութեան Ս. Աւետարանին.

Ի հաւանել 'ի Ս. Պ. բուրգ, Ներկայացեալ առ Օգոստ. Կայսրն և յայտնեալ Նորին Մեծափառութեան և մատուցեալ զյարգանս և զպարտաւորապաշտ մեծարանս, յաջողեցայք գտանել զհամակրութիւն և զուարթութիւն Նորին Կայսերական Մեծութեան և նախարարաց և մեծամեծաց. կարողացայք ընդունել զպսակս առաջարկութեանց Ձերոց Ս. Օգոստափառ խորին զերախտապարտ այլոց բազմաց ազգայնոց, ընկալայք զհրաման կատարման ըղձի և մեծի մասին հայկազանց. որում և յետ սակաւուց ունիք տալ ակնգեն . . . ընկալայք զայն՝ որ երբեմն յանիրաւի տարագրեալ էր 'ի մէնջ, հեռաբար ոչ էր 'ի մեզ, և զի՛ է ինձ երկարել զբանս 'ի համար ածել զամենայն զխնամոյն զգործոց, որոց՝ մանաւանդ զի՝ տակաւին սակաւքն են յայտնի և նոյ ստակայ 'ի մէնջ, թողում զի ժամանակն յայտնեսցէ և առաւելեսցէ զայնոսիկ զամենեսին յարգելոյ՝ մի ըստ միոջէ առ հասարակ սիրելի Ս. Ազգայնոցս համայնից.

Ս. Հաւատիկ այսուքիկ են Ս. Էջմիածնի Տէր, զորս՝ ըստ ստորագրութեան բանի իւր երկու և երեք վկայիւք կամեցեալ հաստատել, սակաւուք յիշեցի, յորոց զբազումս և զառաւել մեծամեծս հաւատայ և յուսայ անշուշտ Ս. Սրբազանութիւն և միանգամայն Ս. Ազգս ողջոյն. որք և են յուսոյ բազում հրճուանաց և մխիթարութեանց շարժառիթք, և շքեղ խիստ հանդիսացուցանեն զՏարեդարձ Ս. Օծման Ձերոյ, և կաթող մեծ թողուն անուան Ձերոյ 'ի յիշատակ փառաւոր և անմահ, ուստի և այսուքիկ են խոստմունք կամ եւս կենաց տարւոյս առաջնոյ՝ զոր ընձեռէ մեզ 'ի յոյս լի. Մեք իմ սէ, են եւս կենաց և պատրաստին կամք . . . 'ի Տեառնէ.

Բայց լուկ, զի զինչ քան զսոսին իցեն և գտանիցին արժանաւոր ապէ զանիք դրժնդակ և անըմբեր վիրացն բժշկութեան Հայրենեաց մերոց Թշուառ և տառապեալ, զինչ քան զսոսին կարևոր և պիտանի ազգային յառաջադիմութեան՝ դաստիարակութեան և լուսաւորութեան. զինչ քան զսոսին 'ի դէպ և արժան անօրինել 'ի գլուխ ազատնի երջանկալի բարեաց ազգային կենաց և պարծանաց և փառաց.

Մնայորդն յառաջիկայս